

## ԿԱՐԾԻՔ

Ալվարդ Գարեգինի Սարուխանյանի «7-9-րդ դասարանների «Երկրաշափություն» առարկայի հարթաշափության հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» ատենախոսական աշխատանքի մասին

Հանրահայտ է, որ հանրակրթությունում դասավանդվող յուրաքանչյուր մաթեմատիկական նյութի հիմնական տարրը, զիսավոր «հերոս» հասկացությունն է, որի շուրջ էլ հյուսվում է համապատասխան նյութը կամ պատումը: Առանց այդ տարրի իմացության, ըմբռնման, հասկանալու անհնար է նյութի մյուս տարրերի յուրացումը, տարրեր, որոնք վերաբերում են հենց այդ տարրի կամ հասկացության հատկություններին, դրանց ապացուցումներին կամ դրա վերաբերյալ խնդիրների լուծմանը: Հետևաբար, նյութի յուրացման հաջողությունը անմիջականորեն կախված է նրանից, թե ինչպես է սովորողը յուրացնում ուսուցանվող հասկացությունը:

Գրախոսվող աշխատանքի հեղինակը միանգամայն ճիշտ է գնահատում այդ ուղղությամբ մեզանում առկա իրավիճակը. ինչպես դասագրքերում, այնպես էլ դասավանդման գործնթացում նյութի ուսուցչական ներկայացումներում հիմնականում նախ տրվում է հասկացության սահմանումը, այնուհետև անցում է կատարվում նրա հատկությունների թվարկմանը և կիրառություններին: Արդյունքում՝ սովորողները մեծ մասամբ կամ շատ դեպքերում չեն յուրացնում կամ չեն հասկանում հասկացությունը, նրա սահմանման մեխանիկական, թեկուզ և ճշգրիտ կրկնությունը միայն սերտում է նշանակում: Այսպես օրինակ, վատահորեն կարելի է ասել, որ աշակերտների չնշին տոկոսն է հասկանում ածանցյալի իմաստը, բայց ճնշող մեծամասնությունը հաջողությամբ կարող է հաշվել տարրական ֆունկցիաների ածանցյալները:

Հասկացությունների կարևորության հետ միասին դժվարանում է դրանց ուսուցման մեթոդիկան, ինչը իրականացվում է մի քանի փուլերով, որոնցից կ ամենադժվարը նրա սահմանումն է: Ատենախոսը հետազոտության առարկա է դարձել հենց մեթոդական այս փուլը՝ լրսաբանելով այն երկրաշափական նյութի հենքի վրա:

Ներկայացվող ատենախոսական աշխատանքը բաղկացած է երկու մասից կամ գլխից: Առաջին գլուխը ունի նախապատրաստական բնույթ: Թեև այն վերնազրված է «7-9-րդ դասարանների «Երկրաշափություն» առարկայի հասկացությունների սահմանումների համակարգը», սակայն իրականում ավելի լայն գործառույթ է իրականացվում՝ այնտեղ ներառելով հետազոտության իրականացման համար անհրաժեշտ մեթոդական, երկրաշափական և տրամաբանական գիտելիքների ողջ տեսական պաշարը: Գլխի վերնազրում նշված համակարգը ներկայացմանը նախորդում են հասկացության սահմանմանը ներկայացվող պահանջների և տեսակների, հասկացության գաղափարի սահմանման վերաբերյալ առկա մոտեցումների ու ձևավորման փուլերի, հասկացության ուսուցման տեսական հիմունքների վերաբերյալ ընդարձակ և ամբողջական դիտարկումներ:

Երկրորդ՝ «7-9-րդ դասարանների «Երկրաշափություն» առարկայի հարթաշափության հասկացությունների սահմանումների ուսուցման հիմնախնդիրը և լուծման ուղիները» գլուխը սկսվում է սահմանումների ուսուցմանը վերաբերող մեթոդաբանական հարցերի քննարկումով: Այստեղ, «Սահմանումների ուսուցման մեթոդաբանական հարցեր» ենթագլխում նախ կանգ է առնվում սահմանումների ուսուցման ուղղությամբ աշակերտների թույլ տված տիպական սխալների վրա: Այնուհետև անցում է կատարվում հասկացության ձևավորմանն ուղղված՝ առաջին գլխում դիտարկված պահանջների ամբողջացմանը: Քննարկվում են հասկացության յուրացմանը և կիրառմանը ներկայացվող պահանջները, որոնց չկատարելն է, ըստ ատենախոսի, դառնում է հասկացությունների սահմանման ուսուցման մեթոդիկայի հիմնական թերությունը: Եվ այդ թերության հաղթահարման ճանապարհը նա տեսնում է հասկացությունների սահմանումների լիարժեք յուրացմանը նպաստող խնդիրների կամ առաջադրանքների ստեղծման մեջ: Ինչի համար ատենախոսը ընտրում է անհրաժեշտ մեթոդաբանական մոտեցումներ, որոնց հիման վրա էլ մշակում է հասկացությունների սահմանումների դասավանդման իր մեթոդիկան:

Ատենախոսի առաջարկած մեթոդիկան շարադրվում է երկրորդ գլխի հաջորդ՝ «7-9-րդ դասարանների «Երկրաչափություն» առարկայի հարթաչափության հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկան» ենթագլխում։ Մեթոդիկայի հիմքում ատենախոսը դնում է հասկացության սահմանման տիրապետման ուղղությամբ է։ Այվազյանի կողմից մշակված մեթոդաբանության և իր կողմից մշակած խնդիրների համակարգի զուգորդումը։ Առաջարկվող մեթոդիկան մեկնաբանում է առանձին օրինակներով՝ դիտարկվող դասարաններից յուրաքանչյուրի համար։

Եվս մեկ ենթագլուխ ատենախոսը նվիրում է հարթաչափության հասկացությունների սահմանումների ուսուցմանն ուղղված տիպային խնդիրների իր կառուցած համակարգին։ Նշում է դրանց հիմքում դրված սկզբունքները, առանձնահատկությունները և մոտեցումները։ Վերջին ենթագլխում կատարվում է մանկավարժական գիտափորձի նկարագրությունը։ Այն անցկացվել է ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների շրջանում։ Գիտափորձի արդյունքներով ատենախոսը հաստատում է իր առաջարկած մեթոդիկայի արդյունավետությունը։

Աշխատանքը գերծ չէ թերություններից։ Մասնավորապես, միայն հասկցությունների սահմանումների ուսուցման մեթոդիկայով սահմանափակվելը որոշ դեպքերում կաշկանդել է և հնարավորություն չի տվել ավելի համակողմանիորեն ու ամբողջական հետազոտելու և ներկայացնելու հասկացությունների ուսուցման հիմնահարցը։ Մասնավորապես հետաքրքիր կլիներ կատարված ուսումնասիրությունները համարել հասկացության մոտիվացիային ուղղված խնդրի լուծումով։ Սակայն հարկ է նշել, որ հեղինակը հաջողությամբ կարողացել է լուծել իր առջև դրված խնդիրը նաև առկա սահմանափակության շրջանակներում։

Նկատվում են նաև լեզվական վրիպումներ /օր., էջ 64, 5,6-րդ տող ներքեւից/, տառերի ոչ միատեսակ օգտագործում /օր. էջ 34, 10-րդ տող ներքեւից/, բառի ոչ տեղին օգտագործում /էջ 42, 4-րդ տող ներքեւից/։ Նկատի ունենալով դիտարկված մտահանգումների կարևորությունը, հավանաբար լրացուցիչ բացատրության կարիք

ունեն էջ 54, 55-ում բերվածները, որոնց համար ատենախոսը բավարարվել է միայն հղումներով:

Արքած դիտողությունները սակայն տիպական չեն և ամենին չեն ազդում ատենախոսության գիտական մակարդակի վրա: Ընդհանուր առմամբ գրախոսվող աշխատանքը գրված է գիտական պատշաճ մակարդակով, ատենախոսի կողմից կատարարվել են գիտամեթոդական ինքնատիպ մոտեցումներ, ստացվել են տեսական և գործնական նշանակություն ունեցող արդյունքներ:

Այսպիսով, Ալվարդ Գարեգինի Սարուխանյանի «7-9-րդ դասարանների «Երկրաշափություն» առարկայի հարթաշափության հասկացությունների սահմանումների ուսուցման մեթոդիկա» ատենախոսական աշխատանքը գիտական պատշաճ մակարդակով գրված, ամբողջական, ավարտուն, տեսական և կիրառական նշանակություն ունեցող արդյունքներով հետազոտություն է և համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԲՈԿ-ի ԺԳ 00-02 դասավանդման և ուսուցման մեթոդիկա /մաթեմատիկա/ մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների գծով թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին, իսկ ատենախոս Ալվարդ Գարեգինի Սարուխանյանը արժանի է նշված մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Մանկավարժական գիտությունների դոկտոր, ֆիզմաթ գիտությունների  
թեկնածու, պրոֆեսոր

*Դավիթ Մանուկյան*

Համլետ Սուրենի Միքայելյան

Համլետ Սուրենի Միքայելյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Խ.

Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի նախագահը՝  
*Համլետ Մկրտիչի Բաղիրյան*



03.10.2023 թ